ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 75 -Ա
«27» ՓԵՏՐՎԱՐԻ 2024Թ

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԸ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշմամբ հաստատված 10-րդ հավելվածի «I. Եղեգնաձորի տարածաշրջան» բաժնի 8-րդ և «II. Վայքի_տարածաշրջան» բաժնի 9-րդ կետերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» և «Վայքի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերությունների գույքի կազմից առանձնացված բաժանմունքների գույքը «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելու նպատակով ստեղծել ընդունման և հանձնման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև ընկերությունների նյութական պատասխանատու անձանց:

3" Հանձնաժողովի աշխատանքների համակարգումը վերապահել ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արսեն Խաչատրյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ.ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հաստատված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
____ փետրվարի 2024 թվականի
N ____-Ա որոշման

ԿԱԶՄ

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԸ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Արսեն Խաչատրյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Վասիլ Ասլանյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

Լիլիա Կարապետյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ,

Հեղինե Սարգսյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ,

Կարեն Ասատրյան – «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրեն,

Ռոբերտ Ասլանյան - «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար,

Խորեն Նազարյան – «Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: